ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 5
« ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԲՄԱՊՁԲ-7/24» ԾԱԾԿԱԳՐՈՎ
ԲԱՑ ՄՐՑՈՒՅԹԻ (ԲՄ) ԸՆԹԱՑԱԿԱՐԳԻ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԻՍՏԻ

ք. Երևան 16-ը ապրիլի 2018թ.
Ժամը 11[00]

Մասնակցում էին՝
Գնահատողներ՝
ՀՀ ՊՆ ՆՏԱԴ ԹԱ վարչության պետ, գնդապետ Վ. Գասպարյան (ԳԱՊ)
ՀՀ ՋՈՒ թիկունքի վարչության իրային ծառայության պլանավորման և ապահովման բաժնի պետ, գնդապետ Զ. Մելիքյան /07.02.2018. ԴՎԱ/32 հարաման/,
ՀՀ ՊՆ ՆՏԱԴ ԹԱ վարչության իրային, ՎՔՆ, կուլտուր-կենցաղային և սպարտային միջոցներով ապահովման բաժնի պետ ՔՀԾ 1-ին դասի խորհրդական Գ. ՈՒստյան,
ՀՀ ՊՆ իրավաբանական վարչության իրավական ապահովման բաժնի ավագ սպա, փոխգնդապետ Ա. Մաղաքյան
ՀՀ ՊՆ ռազմական ոստիկանության հատուկ օպերատիվ ծառայության սպա, լեյտենանտ Ս. Նիկոլյան:
Գնումները համակարգող՝
ՀՀ պաշտպանության նախարարության նյութատեխնիկական ապահովման դեպարտամենտի գնումների փաստաթղթերի ձևակերպման վարչության նյութատեխնիկական միջոցների գնման փաստաթղթերի ձևակերպման բաժնի գլխավոր մասնագետ, ՔՀԾ 2-րդ դասի խորհրդական Տ. Բաղդասարյան:

« ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԲՄԱՊՁԲ-7/24» ծածկագրով ԲՄ ընթացակարգի հանձնաժողովի նիստի օրակարգը հաստատելու մասին.

(Տ.Բաղդասարյան)

1. Մասնակցի՝ «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԲՄԱՊՁԲ-7/24» ընթացակարգի հրավերով պահանջվող (նախատեսված) որակավորման պահանջներին իրեն համապատասխանությունը հիմնավորող փաստաթղթերի առկայության և դրանց ԲՄ ընթացակարգի հրավերով սահմանված պահանջներին համապատասխանության և ընտրված մասնակիցներին հայտարարելու մասին.
2. Հանձնաժողովի հաջորդ նիստի անկացման օրը, ժամը և վայրը որոշելու մասին.

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 5, դեմ՝ 0:

1. Մասնակիցների՝ ԲՄ ընթացակարգի հրավերով պահանջվող(նախատեսված) որակավորման պահանջներին իրեն համապատասխանությունը հիմնավորող փաստաթղթերի առկայության և դրանց ԲՄ ընթացակարգի հրավերով սահմանված պահանջներին համապատասխանության և ընտրված մասնակիցներին հայտարարելու մասին.

(Տ.Բաղդասարյան)

1.1 Մասնակիցների «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԲՄԱՊՁԲ-7/24» ծածկագրով բաց մրցույթի հրավերով պահանջվող որակավորման չափանիշներին իր համապատասխանությունը հավաստող փաստաթղթերը առկա են և համապատասխանում են ընթացակարգի հրավերով սահմանված պահանջներին: Անհամապատասխանություններ են առկա <Բլաժ> ՍՊԸ-ի և <Ոսկե Կար> ՍՊԸ-ների կողմից ներկայացված որակավորման չափանիշներին իր համապատասխանությունը հավաստող փաստաթղթերում մասնավորապես.
- **<Բլաժ> ՍՊԸ-ի** կողմից հավելված 6.1 ներկայացված 1-ին և 2-րդ չափաբաժինների ապրանքների տեխնիկական բնութագրերը թերի են ներկայացվել՝ բացակայում են հրավերով նախատեսված արտադրողի անվանումը և 1-ին չափաբաժնի ապրանքների տեխնիկական բնութագրում նշված է <երանգը սպիտակ>, այնինչ հրավերով նախատեսված է պաշտպանական երանգի:
- **<Ոսկե Կար> ՍՊԸ-ի** կողմից ներկայացված որակավորումը հիմնավորող փաստաթղթերում բացակայում են հանձման-ընդունման արձանագրությունները: Հավելված 6.1 ներկայացված 3-րդ և 4-րդ չափաբաժինների ապրանքների տեխնիկական բնութագրերը թերի են ներկայացվել՝ բացակայում են հրավերով նախատեսված չափս-հասակի սանդղակները և եսքիզները:

Օտար լեզվով ներկայացված պայմանագիրն և նրան կից փաստաթղթերն անհրաժեշտ է ներկայացնել համապատասխան թարգմանությամբ:
Հիմք ընդունելով ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 47-րդ կետը՝ գնահատող հանձնաժողովը մեկ աշխատանքային օրով կասեցրել է որակավորման փաստաթղթերի գնահատման նիստը:
Սահմանված ժամկետում. <Բլաժ> ՍՊԸ-ի և <Ոսկե Կար> ՍՊԸ-ները ներկայացրեցին շտկումները անհամապատասխնությունների վերաբերյալ:
Մասնակիցները սահմանված ժամկետում ներկայացրել է նաև բանկային երաշխիքի բնօրինակը /որ չափաբաժիններով պահանջվում էր բանկային երաշխիք/:

ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի՝ ՀՀ կառավարության 04.05.2011թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 44-րդ կետով նախատեսված համապատասխան եզրակացության համաձայն, մասնակիցները Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի նկատմամբ հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ժամկետանց հարկային պարտավորություններ չունեն, իսկ հրավերով նախատեսված «Ֆինանսական միջոցներ» որակավորման չափանիշին վերաբերող որակավորման պահանջներն առկա են:

1.2 20.04.2018թ. որակավորման նիստի ավարտի օրը՝ հիմք ընդունելով հանձնաժողովի անդամների կողմից ներկայացված գնահատման թերթիկները՝ հանձնաժողովը որոշեց մասնակիցներին որակավորման հատկանիշները գնահատել համապատասխան «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԲՄԱՊՁԲ-7/24» ծածկագրով բաց մրցույթի հրավերի պահանջներին և վերջինիս հայտարարել ընտրված/հաղթող/ մասնակիցներ և վերջինիս պայմանագրեր կնքելու առաջարկ ներկայացնել «Բլաժ» ՍՊԸ, «Ոսկե Կար» ՍՊԸ, «Ավանգարդ» ՍՊԸ և «Մասիսի Գարուն կարի ֆաբրիկա» ՍՊԸ -ներին:

1.3 Հանձնաժողովը որոշեց հաստատել «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԲՄԱՊՁԲ-7/24» ծածկագրով ընթացակարգի արդյունքում պայմանագիր կնքելու որոշման մասին հայտարարության տեքստը հրապարակել «Գնումների մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի համաձայն:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 5, դեմ՝ 0:

2. Հանձնաժողովի հաջորդ նիստի անկացման օրը, ժամը և վայրը որոշելու մասին.

(Տ.Բաղդասարյան)

Հանձնաժողովը որոշեց հայտարարել « ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԲՄԱՊՁԲ-7/24» ծածկագրով ընթացակարգի արդյունքները և հաստատել կնքվելիք պայմանագրի մասին հայտարարության տեքստը: Հանձնաժողովի նիստը հրավիրել գնման պայմանագրեր կնքվելու, իսկ չկնքվելու դեպքում այդ հանգամանքը հայտնի դառնալու օրվան հաջորդող օրացուցային օրը ժամը 11:00-ին, ՀՀ ՊՆ նյութատեխնիկական ապահովման դեպարտամենտի ԳՓՁ վարչության նիստերի դահլիճում:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 5, դեմ՝ 0:

Գնահատող Վ. Գասպարյան

Գնահատող Զ. Մելիքյան

Գնահատող Գ. ՈՒստյան

Գնահատող Ս. Նիկոլյան

Գնահատող Ա. Մաղաքյան

Գնումները համակարգող՝ Տ. Բաղդասարյան